

## ԱԿԱՆԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԱԳԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Երկարատև հիվանդությունից հետո 2012 թ. մայիսի 26-ին Սանկտ Պետերբուրգում կյանքից հեռացավ XX դարի երկրորդ կեսի խորհրդային արևելագիտության նշանավոր դպրոցի հայազգի կարկառուն դեմքերից մեկը՝ իրանագետ-սեմագետ-հայագետ, պատմաբան, լեզվաբան և բանասեր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անահիտ Գևորգի Փերիխանյանը:

Նա ծնվել է Մոսկվայում 1928 թ. ապրիլի 24-ին պրոֆեսիոնալ հեղափոխական Գևորգ Փերիխանյանի (1900-1981) ընտանիքում: Ընտանիքը Թիֆլիսից էր, հայրն ավարտել էր Ներսիսյան դպրոցը (հետագայում բարձրագույն կրթությունն ստացել էր Մոսկվայում): Միջնակարգ դպրոցն ավարտելով Երևանում՝ Ա. Փերիխանյանը 1945 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, սակայն 1948-

ին տեղափոխվում է Լենինգրադի պետական համալսարան. 1951 թվականին ավարտում է Պատմության ֆակուլտետի անտիկ դարաշրջանի բաժինը:

Ա. Փերիխանյանը 1951-1955 թթ. ուսանել է Էրմիտաժի ասպիրանտուրայում՝ ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Կամիլա Տրևերի ղեկավարությամբ: Նա 1955 թ. նոյեմբերին Էրմիտաժի գիտական խորհրդում պաշտպանել է պատմական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման իր գիտական թեզը՝ «Փոքր Ասիայի և Հայաստանի տաճարական միավորումների սոցիալ-տնտեսական նշանակությունը մ.թ.ա. IV-մ.թ. III դդ.»։ Այդ աշխատանքը 1959 թ. որպես մենագրություն լույս տեսավ Մոսկվայում՝ «Արևելյան գրականություն» նշանավոր հրատարակչությունում:

Ա. Փերիխանյանը 1956 թ. աշխատանքի է անցնում Մոսկվայում՝ ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտում, սակայն 1959 թ. տեղափոխվում է Լենինգրադ՝ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունք (ներկայումս՝ Արևելյան ձեռագրերի ինստիտուտ), որի տնօրենն այդ ժամանակ ակադ. Հովսեփ Օրբելին էր: Ա. Փերիխանյանի ողջ գիտակցական կյանքն ընթացավ, փաստորեն, Նևայի ափին գտնվող այդ ինստիտուտի պատերից ներս՝ մինչև իր մահը: Միաժամանակ, որոշ պարբերականությամբ, նա դասավանդել է նաև Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի արևելյան ֆակուլտետում:

Ա. Փերիխանյանը 1974 թ. հաջողությամբ պաշտպանեց Սասանյան դատաստանագրքի մասին իր դոկտորական ատենախոսությունը (*Mātakdān ī hazār dātastān*), որի բնագիրը, ընդարձակ հիմնարար ուսումնասիրությամբ հանդերձ, դեռ նախորդ տարի բուսերենով լույս էր տեսել Երևանում: Տարիներ անց՝ 1993 թ., Երևանում հրատարակած «Материалы к этимологическому словарю древнеармянского языка», часть 1 (отв. ред. д. и. н. И. М. Дьяконов; изд.-во НАН РА) մենագրական աշխատանքի համար Ֆրանսիայի գիտությունների ակադեմիան (*Académie des*

inscriptions et belles lettres) Ա. Փերիխանյանին արժանացրեց Ռոման Գիրշմանի անվան մրցանակի, որը ստացավ իր մահից ընդամենը երկու ամիս առաջ՝ մարտի 26-ին:

Ընդհանուր առմամբ, Ա. Փերիխանյանը հեղինակել է շուրջ հինգ տասնյակ գիտական աշխատանքներ, այդ թվում՝ հինգ ծավալուն մենագրություն, որոնք ընդգրկում են հին և միջնադարյան Երանի, Հայաստանի ու Մերձավոր Արևելքի մյուս երկրների պատմության, մատենագրության, վիմագրության, իրավունքի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների, իրանական ու սեմական բանասիրության, ինչպես նաև հնդեվրոպական համեմատական լեզվաբանության ոլորտները: Լինելով ռուս դասական արևելագիտության, Ն. Մարի, Կ. Զալեմանի, Վյ. Բարտոլդի, Ն. Պիգուլևսկայայի և ուրիշների լավագույն ավանդների տաղանդավոր շարունակողը՝ նա խորապես գիտեր և արժևորում էր հայկական աղբյուրագիտական նյութը՝ և՛ մատենագրական, և՛ փաստագրական: 1983 թ. Մոսկվայում լույս տեսած «Общество и право Ирана в парфянский и сасанидский периоды» հիմնարար մենագրության մեջ նա իրականացրեց հայ մատենագրության պահպանած հնագույն փաստաթղթերի՝ «Գահնամակ»-ի և «Զորանամակ»-ի վերջին, ամենից ավելի հանգամանալից քննությունը: «Առաջավորասիական ժողովածուի» երկրորդ հատորում (1966 թ.) հրատարակված Ա. Փերիխանյանի «К вопросу о происхождении армянской письменности» ծավալուն հոդվածը մինչև օրս մնում է հայոց գրերի ծագմանը նվիրված լավագույն գործերից մեկը:

Այդուհանդերձ, Ա. Փերիխանյանն արևելագիտության պատմության մեջ կմնա նախ և առաջ որպես պահլավական դժվարընթեռնելի և խրթին բնագրերի անգերազանցելի գիտակ ու խոր մեկնաբան, իրանական պատմական բառագիտության, հայ-իրանական լեզվաբանության և պատմական կապերի ուսումնասիրության մեջ նշանակալի վաստակ ունեցող գիտնական: Առանց չափազանցության կարելի է նաև նշել, որ հայ հասարակական գիտության պատմության մեջ Ա. Փերիխանյանը եզակիներից էր համաշխարհային ակադեմիական լայն շրջանակներում իր վայելած մեծ հեղինակության շնորհիվ:

Ա. Փերիխանյանն ակտիվորեն մասնակցում էր Հայաստանի գիտական կյանքին, սերտորեն համագործակցում Պատմության, Արևելագիտության, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի գործընկերների հետ: Նա ելույթներով հանդես է եկել Երևանում տեղի ունեցած բազմաթիվ միջազգային գիտաժողովներում, իսկ արտասահմանյան մի շարք գիտական համաժողովներում ներկայացրել հայագիտական թեմաներով զեկուցումներ: Նրա գիտական ղեկավարությամբ հայ մի քանի շնորհալի ասպիրանտներ պաշտպանել են գիտական թեզեր: Ա. Փերիխանյանին ենք պարտական Հայաստանի տարբեր շրջաններում հայտնաբերված արամեերեն և պահլավերեն վիմագիր ու դրամների արձանագրությունների վերծանության, թարգմանության և ավարտուն հետազոտության համար: Դրանցից են անցյալ տարի Գավառ քաղաքի մոտ հայտնաբերված Արտաշես Ա արքայի արամեերեն վիմագրով սահմանաքարը և ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Սոնասար գյուղի (պատմական՝ Չյունասար) անտիկ դամբարանի դրամները, որոնք ներկայումս հայաստանցի գործընկերները պատրաստում են հրատարակության:

*Բնակվելով Սանկտ Պետերբուրգում՝ վաստակաշատ գիտնականը նաև ռուսական այդ նշանավոր գիտամշակութային կենտրոնում հայ հինավուրց ավանդների կրողն էր, իր համար այնքան սիրելի քաղաքի հասարակական կյանքում հայկական շունչը պահպանողներից և ռուս-հայկական համագործակցությունն ու բարեկամությունը խորհրդանշող անհատներից մեկը:*

*Անահիտ Փերիխանյանի՝ գիտության նորարարի, իր մասնագիտութ՝յան մեջ ոգեշունչ մշակի, սիրված ուսուցչի և ընկերոջ հիշատակը ընդմիջտ կմնա նրա բոլոր գործընկերների, աշակերտների, ինչպես նաև դասական գիտության նորանոր սերունդների հիշողության մեջ:*

**ԱՍԱՏԲՅԱՆ Գ. Մ.**

Բանասիրական գիտությունների դոկտոր

**ՀԱԿՈՒԲՅԱՆ Ա. Հ.**

Պատմական գիտությունների թեկնածու